Ձև N 1

ԲՆԱԿԱՐԱՆԻ ԳՆՄԱՆ ՎԿԱՅԱԳԻՐ

№ _____ - _____

սերիա համար

_____ _____

անուն, ազգանուն, հայրանուն ծննդյան տարեթիվը

_____

ծննդյան վայրը անձնագրի կամ նույնականացման քարտի մեջբերման համարը

_____ _____

հասանելիք բնակարանի սենյակների թիվը տառերով տրամադրվող աշխատության /շահի/ իրերով և տառերով

_____ _____

վկայագրի տրամադրման ամսաթիվը վկայագրի միջոցով բնակարանի (տնակի տան) ձեռքբերման ժամկետը

Հայաստանի Հանրապետության
պաշտպանության նախարար _____

ստորագրություն, ազգանուն

Կ.Տ.

Ձև N 2

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր N _____

ԲՆԱԿԱՐԱՆԻ ԳՆՄԱՆ ՎԿԱՅԱԳՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

քաղ. Երևան ___ _____ 20 թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության կենտրոնական բնակարանային հանձնաժողովի նախագահ _____ -ի
(անունը, հայրանունը, ազգանունը)

(այսուհետ՝ նախարարություն), մի կողմից, և զինծառայող (քաղաքացի) _____
(անունը, հայրանունը,
_____
ազգանունը, ծննդյան տարեթիվը, անձնագրային տվյալները)
_____,

(այսուհետ՝ շահառու) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Նախարարությունը շահառուի բնակարանային պայմանների բարելավման նպատակով բնակարանի գնման վկայագրի միջոցով շահառուին տրամադրում է անհատույց պետական ֆինանսական աջակցություն՝ _____ դրամ:
(գումարի չափը՝ թվերով և բառերով)

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Նախարարությունը պարտավոր է՝

2.1.1. շահառուին տրամադրել բնակարանի գնման վկայագիր.

2.1.2. շահառուի կողմից նոտարական կարգով վավերացված կամ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի N 1851-Ն որոշմամբ սահմանված օրինակելի ձևին համապատասխան կնքված բնակարանի (բնակելի տան) առուվաճառքի պայմանագիրը նախարարություն ներկայացվելու օրվանից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ բնակարանի (բնակելի տան) վաճառողի կողմից ընտրված բանկի միջոցով, բնակարանի գնման վկայագրում նշված գումարը փոխանցել վաճառողի հաշվի համարին.

2.1.3. սույն պայմանագրի 2.1.2-րդ ենթկետում նշված գումարի փոխանցման օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում շահառուին և (կամ) բնակարան վաճառողին ծանուցել գումարի փոխանցման մասին:

2.2. Նախարարությունն իրավունք ունի՝

2.2.1. շահառուից պահանջելու ստորագրել պարտավորագիր այն մասին, որ բնակարանի գնման վկայագրի միջոցով բնակարան (բնակելի տուն) գնելու դեպքում, անկախ հետագայում բնակարանային պայմանների վատթարացման պատճառից, շահառուն չի կարող նախարարություն ներկայացնել բնակարանային պայմանների բարելավման պահանջ:

2.3. Շահառուն պարտավոր է՝

2.3.1. բնակարանի գնման վկայագիրն ստանալուց հետո 12 ամսվա ընթացքում գնել բնակարան (բնակելի տուն) և առուվաճառքի պայմանագիրը ներկայացնել նախարարություն, իսկ այդ ժամկետի ընթացքում բնակարան (բնակելի տուն) չգնելու դեպքում՝ ժամկետի ավարտից հետո բնակարանի գնման մարված վկայագիրը վերադարձնել նախարարություն.

2.3.2. սույն պայմանագրով սահմանված գումարից ավելի բարձր գին ունեցող բնակարան ձեռք բերելու դեպքում գնի տարբերությունը լրացնել իր միջոցների հաշվին:

2.4. Շահառուն իրավունք ունի՝

2.4.1. նոտարական կարգով վավերացված կամ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի N 1851-Ն որոշմամբ սահմանված օրինակելի ձևին համապատասխան կնքված բնակարանի (բնակելի տան) առուվաճառքի պայմանագիրը նախարարություն ներկայացնելուց հետո նախարարությունից պահանջելու բնակարանի գնման վկայագրում նշված գումարը փոխանցել վաճառողի հաշվի համարին.

2.4.2. սույն պայմանագրի 2.3.1-ին ենթակետի համաձայն բնակարանի գնման վկայագիրը նախարարությանը վերադարձնելուց հետո պահպանելու բնակարանային հաշվառման մեջ գտնվելու իրավունքը:

3. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

3.1. Սույն պայմանագրի հետ կապված վեճերը լուծվում են փոխադարձ համաձայնությամբ կամ դատական կարգով:

3.2. Պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնցից յուրաքանչյուրն ունի հավասար իրավաբանական ուժ:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԵՎ ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման օրվանից և գործում է 12 ամիս ժամկետով:

4.2. Սույն պայմանագրի համաձայն շահառուի կողմից բնակարանի գնման վկայագրի միջոցով բնակարան (բնակելի տուն) գնելու ժամկետը սահմանվում է 12 ամիս՝ առանց ժամկետի երկարաձգման հնարավորության:

4.3. Սույն պայմանագրի 4.2-րդ կետում նշված ժամկետում բնակարան (բնակելի տուն) չգնելու դեպքում բնակարանի գնման վկայագիրը մարվում է, և սույն պայմանագիրը համարվում է լուծված, իսկ շահառուն պահպանում է բնակարանային հաշվառման մեջ գտնվելու իրավունքը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	ՇԱՀԱՌՈՒ
----------	----------
(պաշտոնատար անձի անվան և հայրանվան սկզբնատառերը, ազգանունը)	(անձի անվան և հայրանվան սկզբնատառերը, ազգանունը)
----------	----------
(ստորագրությունը)	(ստորագրությունը)
Կ.Տ.	
------- ---------- 20 թ.	------- ---------- 20 թ.